

Երեւոյթականաց մէջ կը խօսուի թէ՛ նախկին Գաղ. ժողովներէն միոյն առեւնագործութեանց տետրէն մէկ երկու թուով ջնջուեր է այժմ. Ի հարկէ այս լրոյն ստուգութեանը չենք երաշխաւորեր, բայց կը լսինք թէ՛ երեւոյթականներէն ոմանք այս մասին պիտի խօսին Ազգ. ժողովոյ յառաջիկայ նստին :

ՊՈԼՍԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ

ՊՈԼՍԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ

«Բնական Օրգանական Պարբերական» է Տօրգանքի մէկ շրջանաւորն օր մը առաւօտեան դէմ Պոլսի կը հասնի: Նաւաւարի մը՝ Պերա կը սէ: Նաւաւարն արդէն վարժած է: կը հանէ զնա Մովսէսէ եւ կը տանի կը յանձնէ այն տեղիւնքի Մակաղինը: Փողմանքի կը տայ: Նաւաւարին կը վճարէ: Նաւաւարին մեկնելէն վերջ երբ կ'իմանայ թէ՝ գտնուած տեղը «Պերա» չէ, սաստիկ կը զայրանայ: Նաւաւարի ուղղակի բերա երթալ ուղած է, նաւաւարը չէ տարած, խարած է զինքը, գող է, աւաղակ է: Այդ բոլորն այլ եւս իւր համարումը կը վերցնէ Պոլսեցւոց վրայէն:

Ռուսքի Մակաղինէն առաջնորդ մը կ'առնու եւ միասին բերա կ'ենեն, ուր բաւական թափառելէ վերջ սենեակ մը կը վարձէ (ձախ կողմը Ղալաթիայէն վեր ելած՝ ժամանակ, բնաւ երբեք ալ կողմն): Ուշադրութիւն չընէր թէ վարձած սենեակին մէջ նստարան, անկողին կ'առնէ ոչ: դռն երկրորդական են: Ինչ որ կը փնտռէ այդ սահման է:

Սենեակը վարձելէն վերջ դարձեալ Ղալաթիայ կ'իջնէ առաջնորդին հետ եւ կ'երթայ Ռուսքի Մակաղինն որ կը համարուի իւր հայրենակիցներու Պոլսոյ գաղթականութեան, Կաթիկոսի, կեղծականային: Առաջին բանը զոր Պոլսի եկող ռուսահայը կը փափաքէ — առաջին վերջ — Պ. Գր. Նիկողոսեանն է: Արդեօք ո՞ր տեղ է Կաթիկոսի: Կարելի է Կաթիկոսեան, Բայց հարկ չ'մնար երթալ տեսնելու: արդէն Պ. Նիկողոսեան հոն կուգայ:

—Ո՞ր տեղանք ո՞ր տեղ, բացագանչելով կը համարեն զիրար:

—Եղբայր, ինչե՞ր ես անում, ինչե՞ր ես Կաթիկոսի: կը հարցնէ Պ. Նիկողոսեանին:

Եւ միմեանք ձեռք բռնած, կը խօսին Վարդապետի, Նուխի վրայ: Կէս ժամ վերջ Պ. Նիկողոսեան եւ Պոլսի եկող ռուսահայը կ'անակնին իրարու դարձուցած արագ արագ կ'երթեւեկեն մակաղինին մէջ: Հուր կը ցայտէ իրենց աչքերէն, մորուքին ցըցուած, լանջերին ուռուցիկ, «խարապ արեցիր» դուր ինչ էք շինում: պրօպականտա պրօպակամ» այսպիսի բառեր միայն կը լսուին խօսքերու տեղատարափին մէջ: Պ. Նիկողոսեան եւ Պոլսի եկող ռուսահայը արդէն մահացու թշնամիներ եղած են:

Մակաղինէն իւր առաջնորդն առնելով կը վերադառնայ Բերա: կը մտնէ սենեակը, թէյը կը խմէ, թուրթու մեկն կը ճարէ եւ կ'սկսի թղթակցութիւն մը գրել — Պոլսի եկող ռուսահայը միշտ ներկայացուցիչ է թիֆլիզի թերթի մը: — Պոլսը լաւ ճանչցած է եւ պէտք է հաղորդէ Պոլսոյ Հայոց իւր վրայ թողած տպաւորութիւնները: Պարզ կը գրէ: Պոլսոյ արք եւ կանայք, ծերեր եւ երիտասարդք, եկեղեցականք եւ աշխարհականք, վաճառականք, արուեստաւորք, լրագրողներ, երեսփոխանք, ամէն ոք խաբէրայ, ստախօս, անբարոյական ճիւղեր են: Թղթակցութիւնը կը զրկուի: Թիֆլիզի թերթը կը հրատարակէ այդ անկեղծ յօդուածը «Պոլսի իրական կեանքից վեր առնուած» եւ մեծ «էնսայն» առաջ կը բերէ Ռուսահայոց մէջ:

Նոյն գիշերն յուզեալ քուն մը կ'անցունէ:

յաջորդ առաւօտուն կանուխ կ'իջնէ Ղալաթիայ — ճամբան սովորած է — կը յաջորդէ տեսնել Արեւելի խաբարատունը: Հոն կը փնտռէ Հայկակը, կը գտնէ: սիրալիր տեսութիւն մը կ'ընեն եւ միասին դուրս կ'ելնեն պտղտեղու:

—Ա՛խ, պարոն Հայկակ, արդեօք ո՞ր տեղ կ'արեւի է գտնել Խրիմեան Հայրիկին: Ա՛խ, պարոն Հայկակ, շատ ցանկանում էի տեսնել Պ. Չերազին: Ի՞նչ է շինում Քէշկէկը:

Պոլսի եկող Ռուսահային հետաքրքրութեան առարկայներն ասոնք են:

Ճամբան կը հանդիպին Փափագեանն է: Քէշկէկին: Հայկակ կը ցուցնէ զնա իւր ընկերոջ: —Կը ճանաչէ՞ք: —Ո՛չ: —Փափագեանն է Քէշկէկին է: —Դա՛ է, եւ կ'սկսի իւր բոլոր գիտցած հայհոյութիւններն ընել: Բայց կը զարմանայ թէ ի՞նչպէս «Պ. Սպիկ Ունջեան» միասին չէ Փափագեանն «Քէշկէկու» հետ: Ի՞նչու Հայկակ կ'ըսէ նմա թէ՝ Փափագեան եւ Ունջեանն է Քէշկէկը միմեանց թշնամիներ են:

—Ի՞նչ էք ասում: Խնտրեմ, խնտրեմ, մենք լաւ կ'իտենք: —Երկուքին անունը միասին կարդացած է միշտ եւ համոզուած է թէ երկուքը միասին Ներսէսի եւ Խրիմեանի հալածիչներն եղած են: Հայկակ կը տեսնէ թէ հակառակ համոզում մը գոյացնել տալ դժուարին է, կարճ կը կապէ: Հայկակ կը ծանօթացնէ նմա մի քանի անձինք, որոց մէջ բերացիներ կան, եւ անոնց հետ Բերա կ'ենէ Պոլսի եկող Ռուսահայը: Նոյն գիշերը ճաշի կը հրաւիրուի Բերայի պատրիարքէն — Մկրեան Տէր հօրմէն: —

Յաջորդ օրն այլ եւս ինքնիրեն կը պտղտի Ղալաթիայ մէջ: Օրն երկու անգամ Ռուսաց թղթատունը կ'երթայ իմանալու թէ՝ արդեօք Ռուսաստանէն իրեն փող եկել է: Պոլսի գաղթն ի վեր բաւական ռուսասէր եղած է, եւ ամէն առթիւ «մեր կենսալը» (հիւսպատոսը) կը յիշատակէ: Խրիմեան Հայրիկը տհաճ է, հիացած է եւ սքանչացմամբ կը գոչէ: «Դա երեւելի բան է, մեր սրտի սրբութիւնն է»: Չերազն ալ տեսած է, բայց պատրանք ունեցած է: Միտքը գրած էր տեսնել ուրախ, զուարթ, յանդուգն երիտասարդ մը, բայց զէմն ելած է ծանր, տխուր անձ մը որ ամէն մէկ բան կ'աւելցի կ'արտասանէ: Քէշկէկին ալ հանդիպեր է: Օր մ'ալ Ազգ. Ժողովին զընացեր է որ իւր վրայ տպաւորութիւն է ըրեր: Ալ այնուհետեւ Պոլսի տեսնելու տեղ չկայ, վասն զի Ղալաթիան եւ ճարչան տեսեր է: բոլոր կ'ընենք ալ տեսեր է: ա՛լ պրծաւ: Կ'սկսի հանգիստ առնուլ: Այնուհետեւ իւր անտանիստ վայրը կ'ընէ Արեւելի խաբարատունն, ուր կուգայ օրն երեք անգամ եւ միշտ կ'ըսէ:

—Ա՛խ, դա ի՞նչ լաւ լրագիր է: ափսոս որ Ռուսաստան չի մտնում:

Սակայն, կամոց կամոց, փաղաքշանօք կ'սկսի զիտղուութիւններ ընել: Արեւելի վրայ:

—Խնդրեմ, ինչո՞ւ ուղիղ չէք Կաթիկոսին: Որքան Պոլսեցիք էք Կաթիկոսի: Ինչո՞ւ Պոլսեցիք եւ ոչ թէ Բողոքարկ: Օր մ'ալ կը բարկանայ թէ՝ եւ ոչ իսկ Հայոց անուններն ուղիղ կը գրուին: Տատեան կը գրեն եւ ոչ թէ ճիշդը Դադեան: Օր մ'ալ կը տեսնէ թէ Արեւելի ներքեւ դըրուած է: Արտօնատէր Տամատեան:

—Ա՛խ, Դամատեան է, ինչո՞ւ էք տըպում Տամատեան:

Ի՞նչու կ'ուզեն հասկնալ թէ ամէն ոք

իւր անունն տէրն է, թէ ինչպէս կ'ուզէ այնպէս կը գրէ իւր անունն:

—Ա՛յ, ո՛չ, խնտրեմ: Դամատեան եւ ոչ թէ Տամատեան:

Յաջորդ օրը կը տեսնէ թէ դարձեալ Տամատեան տպուած է եւ ոչ Դամատեան: Կուգայ Արեւելի խաբարատունը կը լընուի, կ'երթայ, այլ եւս չգար: Այդ օրէն կ'սկսի յայտարարել թէ Արեւելի խաբարատունը թերթ է, սկզպունքից զուրկ, ոչ մի ուղղութեան հետեւող:

—Ա՛խ, մի թերթ, որի խաբարներն եւ ոչ իսկ իրան աշխատանք կ'ընէ կ'ընէ: Դամատեան եւ ոչ թէ Տամատեան:

Այլ եւս Պոլսի ոչ ոքին հետ բարեկամ է, ոչ Ռուսահայի հետ, ոչ Թրքահայի հետ: Օր մը, տխուր, անձրեւոտ օր մը կը գնայ Ռուսահայ Կաթիկոսի: Նոյն օրը պիտի մեկնի տունն արդէն «վեր առած» է: Յասկոտ է նեղացած է: հապճեպով պատրաստութիւն կը տեսնէ: շոգենալի մեկնելու ժամանակ է: Պ. Գր. Նիկողոսեան ներս կը մտնէ: նա զիրար չեն բարեկեր, բայց կամաց կամով կը մօտենան իրարու:

—Եղբայր, ի՞նչ եւ է, այսպէս թէ այնպէս, թողնենք անցեալը վերջացնենք: (անարկելով իրենց կուռոյն): Խօ՛, այս Պոլսեցի հոստոսներին համար զրած դեռ է: Սուս կը կենամ, տեսածս կ'երթամ միշտ կը պատմում: Ախ, մենք սրանց մարդ էինք կարծում: Պոլսեցի տեսնելին բէշքը փող էինք լեցնում: Իսկ այս անխրաւները խնդրէին Հայաստանի ժողովուրդին շան տեղ չեն դնում: Կը տեսնես, կը տեսնես:

Մնաց բարովը կ'ըսէ Կաթիկոսին եւ Ռուսահայ Կաթիկոսին: Տօրգանքի մէկ շրջանաւորն օր մը առաւօտեան դէմ Պոլսի կը հասնի: Նաւաւարի մը՝ Պերա կը սէ: Նաւաւարն արդէն վարժած է: կը հանէ զնա Մովսէսէ եւ կը տանի կը յանձնէ այն տեղիւնքի Մակաղինը: Փողմանքի կը տայ: Նաւաւարին կը վճարէ: Նաւաւարին մեկնելէն վերջ երբ կ'իմանայ թէ՝ գտնուած տեղը «Պերա» չէ, սաստիկ կը զայրանայ: Նաւաւարի ուղղակի բերա երթալ ուղած է, նաւաւարը չէ տարած, խարած է զինքը, գող է, աւաղակ է: Այդ բոլորն այլ եւս իւր համարումը կը վերցնէ Պոլսեցւոց վրայէն:

—Դա լաւ ճանաչում է Պոլսին եւ թրքահայերին:

ՀՐԱՋԴԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆ ԱՌ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Պատրիարքական փոխանորդ Հայր սուրբը կարեւոր տեսակցութեան մը համար զիս հրաւիրելով առ ինքն, մայիս 13ին չորեքշաբթի օր գնացի ի Պատրիարքարան Փոխանորդ Հայրն յոյժ քաղաքավարութեամբ հաղորդեց ինձ Ազգ. Վարչութեան որոշումներն Մասիսի համար (այս աւուր Օրապէս բաժնին ներքեւ հրատարակուած են այդ որոշումները):

Ա. Գարակէտմարեկի եկեղեցւոյ քահանայից դասն, հանդերձ իրենց վարդապետով բողոքագիր մը մատուցանելով վարչութեան, պահանջած է որ Մասիսի արքիւ 23ի թուոյն մէջ հրատարակուած պատմութեան մը դիւցազնը եղող քահանայ կամ ցոյց տամ, կամ յետս կոչեմ, եթէ վարչութիւնը զիս յանձնէ Պետական դատարանին:

Պատասխանեցի թէ՝ կրօնական խնդրմը համար եթէ Պատրիարքարանը Պետական դատարանին դիմելու հարկ կը տեսնէ տարակույս չկայ թէ իմ կողմանէ ո՛ր եւ առարկութիւն չկրնար լինիլ: Պատրիարքարանէն աւելի նախանձախնդիր լինիլ կարելի չէ: Բայց ո՛չ քահանայն մասնաւոր լինելու եւ ո՛չ ալ յետս կոչում մը ընելու հարկ կայ, քանի որ գրած եմ «աւանդական պատմութիւն» արդ՝ «աւանդական» բառը կը նշակէ հին ատենը պատմական:

տաճած դէպք մը, աւելի կամ նուազ ճշմարիտ, հետեւեալ Գարակէօմբիւկի արդի քահանայից դասը բորբոքուելու պատճառ մը չունի(*) :

Բ. Ազգ. Ժողովոյ նիստերը խեղաթիւրեալ կը հրատարակենք : Պատասխանեցի թէ քս այդպէս չեմ կարծեր, բայց եթէ խեղաթիւրումներ կան, Ազգ. Ժողովոյ Մայր-Դիւանը կրնայ նամակաւ մը ուղղել այդ խեղաթիւրումներն եւ կը հրատարակեմ նամակը : Բայց թէ Վարչութիւնն Ազգ. Ժողովոյ Դիւանին փաստաբանն եղած լինի, այդ անըմբռնելի է :

Գ. Ազգ. Ժողովոյ անդամոց եւ պաշտօնական անձանց դէմ անպատշաճ լեզու կը գործածենք :

Բնաւ իմ սովորութիւնս չէ անպատշաճ լեզուաւ խօսիլ կամ գրել : Բայց եթէ այդպիսի լեզու գործածեմ, վիրաւորեալը կարող են կամ Պատրիարքարանի եւ կամ Պետական դատարանի առաջ դատ բանալ ինձ դէմ : սակայն Ազգ. Վարչութիւնն ինքնաբերաբար ամէն մէկ երեսփոխանի պատուոյն նախանձախնդիրը չկրնար լինիլ, ինչպէս չէ եղած երբեք :

Դ. Պէտք է այսուհետեւ ուրիշ ընթացքի մը հետեւինք : Պատասխանս եղաւ՝ թէ չեմ կարող : Անցեալս ուրանալու պատճառ մը չունիմ : Իմ համոզմամբս լաւ կը գործեմ, բայց եթէ գէշ ալ կը գործեմ, Ազգ. Վարչութեան պարտականութեանց սահմանին մէջ չէ իմ լաւութեանս կամ գէշութեանս մասին մտաւորութիւն ունենալ :

Փոխանորդ Հայր սուրբն յայտարարեց թէ պատասխաններս պիտի հաղորդէ Ս. Պատրիարքին եւ ես մեկնեցայ :

Ա. Ա.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ «ՄԱՍԻՍ»Ի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մայիս

Ահա՛ հաղորդեմ՝ ձեզ մի տեղեկութիւն տեղւոյս եկեղեցական գործերից :

Տարին մի անգամ տեղի ունեցող հայ

(*) Քահանայից բողոքագրոյն մէջ անդամային բառը ջնջուած էր : այսպիսի խեղաթիւրմանց համար չենք զարմանար, քանի որ այդ մեքենայութեանց պարագլուխը Վահան անունով Պարտիզակցի վարդապետն է : Գարակէօմբիւկի քահանայից կրօնական պատուոյն դէմ ինչ որ ալ ըսուի քնաւ բողոքելու իրաւունք չունին, քանի որ իրենց գլուխն ունին մի այնպիսի անձ որ հայ եկեղեցականութեան պատիւ չի բերեր : այսպիսի անպատուութեան մը հանդուրժող քահանայը շատ սէգ լինելու իրաւունք չունին : Երբ Ազգ. Վարչութիւնն հետամուտ է պատժելու Շահպաղեան վարդապետին, ասդին առանց խղճահարութեան բարեպաշտութեան քերթ կեդրոն համարուող թաղի մը քարոզչութիւնը կը յանձնէ այնպիսի անձի մը զոր դեռ երէկ Ս. Պատրիարքը կը փնտէր Վերօնական Ժողովէն իբր խորհրդիս նենգաւոր :

Եթէ Պատրիարքն այդ մարդը Գարակէօմբիւկի զրկելով կարծեց թէ Ս. Սատուածածնայ նոր առիթ մը պիտի հայթայթէ հրաշք գործելու, կարծենք կը սխալի : Թէ ախտաժէտք, թէ կոյրք եւ թէ խեղագարք կրնան հրաշքը փրկուիլ ի Գարակէօմբիւկի, կը հաւատանք : Բայց թէ այդ մարդը կրնայ յուզութիւն գալ, այդ հրաշքին հաւատալը մեր կարողութենէն վեր է :

Ժխականների ընդհանուր ժողովն այս տարի զանազան տարածայնութիւնների առթիւ յետաձգվեց երկրորդ անգամի : սակայն սա չէ գլխաւորը : Խորէն վարդապետի գալէն ի վեր, մի, երկու երեք մարդիկ, հանգերձ Խանթարճեանց քահանայով իրենց պարագլուխ ունենալով իշխան Աբամելիքը, շարունակ խոչընդոտներ են առաջ բերում Հայր սուրբի գործունէութեան դէմ : Մատուցութիւններ էին դիմում, թէ Հայր սուրբ ազատամիտ քարոզներ է կարգում եւ ուղարկութեան տակ առնվում : Էջմիածին դանդաղներ էր հասցնում իշխանը եւ :

Այսպիսի գանգաւորների, սուր արարմունքների հետեւանքն այն եղաւ, որ Սինոդէ կողմից Խորէն վարդապետին պաշտօնական թուղթ է հասնում, թէ նա, Հայր սուրբը, այսուհետեւ իրաւունք չունի քահանայ անուանուելու եւ ինքնուրոյն ծէսեր եւ այլ հայկական սովորութիւններ մշտեցնելու մինչ քան կանխորէն Սինոդի իրաւունքը չ'ստացուի այդ ծէսերը մտցնելու համար : այլապէս մերժելու : Միեւնոյն ժամանակ իշխանն եւս նամակ է ստանում կաթողիկոսի կողմից, ուր Մակար կաթողիկոսը ցանկանալով հաճոյանալ իշխանին, ծառայել նորա աններելի ձգտումներին, տեսէք ահա մօտաւորապէս ինչ է գրում :

« Սեղանի վերայ բացի մեծ վարագոյրից, Խորէն վարդապետն իրաւունք չունի մի այլ փոքրիկ վարագոյր կախելու այն փոքրիկ սեղանի առաջ, ուր պատարագիչը կիրակի օրերը իր սուրբ պատարագն է կատարում : Իրաւ, շարունակած է կաթողիկոսը, այդ փոքրիկ վարագոյրը գործածվում է եւ շատ եկեղեցիների մէջ, սակայն դա մի աւելորդ բան է, անհրաժեշտ չէ : Ինչու որ դա հանգուցեալ Գէորգ կաթողիկոսի ներմուծածն է ըստ սովորութեան տաճկահայոց : նոյն իսկ այժմ Զեր գրութիւնն ըստանալուս, հրամայեցի նոյն եւ Մայր Աթոռի այդ վարագոյրը վեր առնելու, որպէս մի աւելորդ կարգադրութիւն, սովորութիւն, որ մտցրել է Գէորգ կաթողիկոսը » եւ այլ այնպիսի գոյն կրող բաներ : Խօսք չկայ որ Խորէն վարդապետի հետ միասին խայտառակուեց (զինաթափ եղաւ) նոյն եւ սկզբունքը եւ հայ ժողովուրդը : Այս տեղ մենք կաշինքիցս դուրս գալով աշխատում ենք որ առաջ հայկական ծէսեր ու սովորութիւններ մտցնելուն աշխատեն լինելու եւ ամեն բան բարեկարգուած տեսնելու ահա երեւան է գալիս հայ ազգի հոգեւոր պետը եւ մի գրչի հարուածով բոլորը քանդում ու տակն ու վերայ անում : ինչ որ ես գրում եմ եւ առհասարակ գրած եմ ձեզ, զուտ ճշմարտութիւն է :

Երեւակայեցէք այս մի փաստից, թէ տեղւոյս հոգեւոր պաշտօնեաները մինչ ո՞ր աստիճան երես են առել իշխանի վարմունքից : Աւագ ուրբաթ օրը եկեղեցւոյ յարկի տակ, Խորէն վարդապետն եկեղեցական կալուածների կառավարութեան ժողովի մի երկու անդամների ներկայութեամբ առաջարկումէ Խանթարճեանց քահանային Զատիկի երեկոյն եւ առաւօտը պատարագին, երբ պատարագելու է հայր սուրբը, վերաբերումս կատարէ շապիկը հագած, ինչպէս սովորութիւն է միշտ եկեղեցիների մէջ, բայց ոչ շուրջաւոր, ինչպէս անում են օրթոդոքսները (սուրբ) : քահանան պատասխանում է, թէ չի կատարի հայր սուրբի ասածը, ըստ որում իշխանը դէմ է գործն. երբ առարկվում է Խորէնից, թէ ո՞վ է իշխանը կամ ի՞նչ իրաւունք ունի որ եւ է մի իշխան հայ եկեղեցու գործերի, ծէսերի

մէջ, յամառ եւ ստրկացած քահանան պատասխանում է, թէ թերեւս իրաւունք ունի իշխանը որ հրամայում է, այլապէս, ինչո՞ւ պէտք է հրամայէ : այսպէս մի երկու խօսակցութիւնից յետոյ Հայր սուրբը անգամների ներկայութեան նախատում է քահանային եւ մի քանի կծու խօսքեր ասում իշխանի հասցէին : Ահա՛, ձեզ, եւ տեսէք Մակար կաթողիկոսը ո՞ւմ է պաշտպանում եւ ինչպէս է ոտնակոխ անում մեր սուրբ աւանդութիւնները : Ժողովուրդը չի կարող դանում ըմբռնել, թէ դա Գէորգ կաթողիկոսի մտցրածն է եւ եւ :

Վերջապէս այժմ, այս օրերս դեռ բոլորը լուռ են եւ հանդարտութիւն է տիրում, թէեւ ամեն մի կողմ իր կողմից իր ուղածն է տեսնում ու գործում :

ՄՍԵՀ

ՄԻՐՉԸԿ ԵՒ ՔԵՇԱՊՈՒ

Աղմեաց գաւառի այն մասն, որ կը կազմէ Տիգրիսի պարարտ հովիտը, կը բաժնուի առանձին ստորաբաժանմանց : Այս մանր բաժանումներն երբեմն չը նայելով իրենց գրից ու աստիճանին անուցած են իրենց վրայ այնպիսի ժողովուրդներ ու անհատներ որոնք իրենց բնական յատկութիւններով ու կորովով հասարակաց ուղարկութեան արժանացուցած են աննշան բնական վայրերին :

Մանօթ է արդէն պատմագէտներին տրեւապաշտից ազգաբանութիւնն : այս փոքրիկ ժողովուրդ մերթ ասիական ազգութեանց շարժմանց հոսանքներին մասնակցած է : Իւր փոքրիկ ալիքներով : եւ այսօր երբ դեռ այդ խուժանն իր նախապաշարումներով կ'ապրի Աղմեաց եւ Վասպուրականի զանազան կողմերի մէջ, հակառակ իր թուոյ աննշանութեան, կը պահէ այն դարաւոր աւանդութիւններն առանց գրի եւ թղթի աւանդաբար կտակելով :

Թուականէս մէկ դար առաջ, արեւապաշտներն աւելի նշանակութիւն ունէին քան այսօր : բնականապէս այս խուժանի թեթեւ փայլ կը նշմարուէր այն ժամանակամիջոցին, երբ դեռ Օսմանեան կայսրութեան ուղարկութիւնը գրաւած չէին Տաւրոսի եւ Անդրտաւրոսի լեռնական մանր ազգութիւններն, երբ տակաւին քուրդ պէյլութեանց զազիր դարձեալները դարձաւ հոտութիւնը կը թունաւորէր մեր հորիզոնը :

Սասնոյ գաւառի հարաւային մասին սահմանակից է Ռ. գիւղաքաղաքն : այս աւանդէն շատ հեռու չէր այն գիւղն ուր կը բռնակէր արեւապաշտ Միրզըկ քանի մը տասնեակ տուն հարեւաններով :

Այն անհանգարտութեան արիւն որ կը տիրէ արեւապաշտ բրդաց երակների մէջ, այս միջոցին ետալ կ'սկսի : Բնական ճարպիկութեամբ եւ ձիրքերով օժտեալ Միրզըկն, այլ եւս չէր կրնար ժուժել այն աղէտների որոնք նոյն ժամանակամիջոցի բուրդ պէյլերի բռնութեանց արդիւնք են : Այս անկարգութեանց բաւիղին մէջ հաւասարապէս կը տուայտէին, ինչպէս յիշուեցաւ, այն ամեն ազգութիւնը, որոնք այդ քառականութեան մէջ ծնանելու դժբաղդութիւնն ունեցած էին : այս դժբաղդութեան մասնակից էին նաեւ այդ երկրի հայը, եւ սակայն հայոց բնածիր խաղաղասիրութիւնն եւ արդարասիրութիւնն եր-

բէք չէր թելադրեր զիրենք ունենալ մի այնպիսի մտածում որոյ հետեւանք ի հարկէ նոյն ժամանակի միտքերի համար անհասկանալի էր :

Այդ դաւառն ունենալով բարեխառնութեան ամենացանկալի կլիմայ եւ հողի պարարտ խաւեր , խիստ արդիւնաբեր է իւր բուսականութիւնն . իւր աննման միջդերով եւ բնութեան պարզեւած բարիքներով շտեմարան է Միջագետաց եւ Աղձնեաց :

Հայոց համար բնութիւն է դարձեր իրենց բնական երկիրը շէնցնելու ճարտիկ ջանքերը . այսպիսի շէնարար ժողովուրդ մը եթէ ունենայ իրեն սատարող ձեռքերն , ինչ յառաջագիւտութիւն քրտնալիք երկրի երկրագործական եւ առեւտրական ամենակարեւոր արհեստների մէջը : Ներկայ հայութեան մէկ հիւլէն կազմող այն երկրի հայոց հոգեւոր հովիւ կը կոչուի մէկն որ գիրք ու թղթի հետ գործ ունենալէ աւելի մահատու գործիքների ծանօթ կ'ըլլայ : Ժողովուրդը՝ մանաւանդ անուս ժողովուրդն , իր կղերի ասածն ու խօսածը կ'ըմբռնէ , ա՛յնքան ջերմ , որքան խոր չեն ազդեր իր սրտին սրտագամներն իսկ , եւ Քէշա պէ՛լ՝ իր հոգեւորական պարտականութիւնները կատարելէ առաջ կ'սկսի մարմնականէ : Այս անկերպարան կացութեան մէջ , եթէ երբէք միտքարական բան մը կը լինի այդ երկրի համար , այն ալ արեւադաշտից եւ հայոց միջեւ եղած բարեկամական յարաբերութիւնը կը լինին , որոնք թէեւ նախական եւ զերծ արդի քաղաքական շարժումներէն , բայց պարզութեան եւ անկեղծութեան խնամքներով մշակուած ու ամրապնդուած էին :

Օր մը երբ այս երկու հասարակութեան երկու պետերը (Միրզըկ եւ Քէշա պէլ) կ'ուսնենան բարկավազ ամենապարզ տեսութիւններ՝ զուգահեռաբար տեղի կ'ունենայ հետեւեալ դէպքն որ խթան կը դառնայ այդ հարստահարեալների խրտման : Այն պարագային , երբ Միրզըկի տան սեղանը նստած էին այդ երկու մեծաւորների հետ ուրիշ մէկ քանի արեւադաշտ եւ հայ խօսքի տէր մարդեր , եւ տան տիկինը , նախական պարզութեամբ՝ դառն մտով , մեղրով , սերով , կաթով , պանրով եւ անբիծ ձիւնէն աւելի ճերմակ բրինձ փրկով ու տեսակ տեսակ միրգերով կը հիւրասիրէր իւր աւագ հիւրերն , այն պարագային որ սեղանի ախորժակը բանալու խօսքերն իրենց պարզ եղանակաւ կ'սկսին դառնալ , ներս կը մտնէ արեւադաշտ երիտասարդ մը եւ կը դուռէ այսպէս . «Հարիւրէն աւելի սպառագինեալ քուրդեր , կէս օրէն քիչ մ'առաջ , երբ պատրաստուած էինք ոչխարնիս քէրը՝ 2) բերել , մեր հօտին վրայ յարձակեցան , հովիւ ընկերներէս Հասուն եւ Ալօն կեանքէ զրկեցին , մնացածներս իրենց ուղածին չափ ծեծեցէ եւ կողոպտելէ՝ ետք , մօտիկ անտառի ծառին կապեցին , բոլոր հօտը սրբեցին տաբան . երկար բարակ նեղութիւններէ ետք , աջ ձեռքս կապէն աղատեցի . այս պարագային ոտքերուս ու ընկերներուս աղատութիւնն ապահովուած էր , բայց ընկերներս սաստիկ վիրաւորուած լինելուն ուշադրոյս գտայ զանոնք . . . ահա՛ իմ վիճակը . . . լեզուս կը կարկամի . . . ամեն բան կրնար

հասկնալ . . . այս խօսքերն հաղիւ թէ կ'աւարտէ , ուշաթափ գետին կ'իյնայ :

Այն անակնկալ լուրն երկայրի սրի նման կը խզէ բաղնիկաների հաճոյսկան խօսքերն եւ քէֆի թելը : Պահ մը տըխուր լուր թիւն կը պատէ սեղանի շուրջը , բայց վերջապէս Քէշա պէլ այդ լուր թիւնը կը խզէ այս խօսքերով . «Ամենքս ալ մարդ ենք եւ մէկ արարչի ստեղծուած , պէ՛տք է ուրեմն այսպէս վարուինք իրարու հետ , միթէ զօրաւորն անզօրին տէ՛ր պէտք է լինի , մենք կը սիրենք հնազանդութիւն բաց ոչ թէ կոշտ բուրդին , այլ օրինաւոր եւ արդար կառավարութեան : Ինձ մնայ , այս մասին այսպէս վարուելու չենք , մենքիլ ամենուս անհրաժեշտ է » :

Քէշապօլի այս ճառն զոր տեղական շէտով եւ իր յատուկ ճարտիկութեամբն արտասանած էր , մեծ ազդեցութիւն կը գործէ հանդիսականաց : Միրզըկ անմիջապէս կը հրամայէ ձիեր դուրս քաշել : Ինքն ու Քէշապօլ մէկ քանի արեւադաշտ եւ հայ աւանաւոր քաջերի հետ ձի կը նստին . մէկ քանիներն ալ հետիոտն կ'ուղեկցին անոնց :

Արդէն բոթարեր հովիւը պատմած էր ոչխարներն որ տեղէն տանին ու աւագակաց ինչ ճամբայ բռնելը : Հարկ չը կար այլ եւս այս մասին կարապետի : Այսօրին աւագութեամբ կը սլանան , բոլորն էլ կազմ ու պատրաստ , կը կտրեն 69 ժամու ճամբայ այնպիսի սարսափելի լեռներէ ու կիրճերէ որոց տեսքն անգամ օտարի մանկանց ուրիշ է : Այսպիսի կտրուկ ճամբաների միջոցաւ կը մօտենան այն լեռան որոյ թաքստեայ մի ձորի մէջ կը նշմարեն աւագակներն , ուր ուրեմն կանգ կ'առնուն դիմադրելու կարգադրութիւններ ընելու :

Քէշապօլ իրենց խումբն երկուքի կը բաժնէ . մէկը կը յանձնէ Միրզըկի եւ միւսին ինք կ'առաջնորդէ . աջ ու ձախ կողմերէ կը պաշարեն հրոսխուրն , ու Քէշապօլ ձայն տալով կը գոչէ . « Է՛յ , կամ ոչխարները թողով՝ մեկնեցէք կամ թէ ոչ փութերիդ գնտալով կը լեցնենք » : Միրզըկ անդին հրացանի հարուածով մը կը ձայնակցի նմա , որոյ գնտալը շէտակի աւագակախմբի գլխաւորին ներքանի քով կը դալի , իսկ գոչերը կը յամառին ու աւելի յանդգնութեամբ կը պատասխանեն :

Անդիէն Միրզըկի խմբէն մէկը « Մեղք էք , կ'ըսէ աւագակաց . պատուով ձեր ճամբան գնացէք ու մեր հօտը թողէք » . աւագակները կրկին յամառութեամբ կը պատասխանեն , ու երկուստէք յարձակումը կ'սկսի :

Աւագակաց խումբը 120 անձերէ կը բաղկանար , Միրզըկին ու Քէշապօլին 30 : Երկար ատեն ժայռերը պատնէջի տեղ կը ծառայեն այդ պատերազմականաց . անհրաժար կը լինի հաւանումը : Քէշապօլ իր երկաթի հաստատամտութեամբ « Լաւ է խօրտըմ » (քաջ օրդիք ենք) պօռալով վրանին կը վազեն : Ճիշ ու ձայն կը թնդացնեն լեռներն ու անձաւներն . աւագակները 40 մեռեալ եւ 20 վիրաւոր ձգելով խոյս կուտան . արեւադաշտից կողմէ՝ 10 մեռեալ եւ քանի մը վիրաւոր կ'իյնան : Այս քաջութեամբ ամբողջ հօտն հետերնին առած իրենց տեղը կը դառնան : Այն օրուրէն ի վեր այս դէպքն առիթ կուտայ արեւադաշտից եւ բըրդաց միջեւ սաստիկ ատելութեան մ'որոյ հետքերը կը մնան ցայսօր :

Դ. Պ. ՆԱՀԱՊԵՏԱՆ

Մարդկային հասակն . — Ըստ հաճոյս մեծնալու եւ պզտիկնալու միջոցն . — Հասակն առաւօտուն եւ երեկոյն . — Յոգնութեան ազդեցութիւնը . — Նոր դիւարը եւ գիւղի կախարհներ . — Ան եւ կնոջ անուրբ

Ընդհանրապէս միամտաբար կը կտրծուի թէ 1-70 մեղր հասակ ունեցող անձ մը օրն ի բուն կը պահէ իւր մէկ մեղրի եւ 70 հարիւրող ամեղրի բարձրութիւնը կը կարծուի թէ հասակն անփոփոխ կը մնայ եւ թէ մի եւ նոյն բարձրութիւնն ունինք առտու իրիկուն եւ օրուան ամեն ժամերուն : Պատրանք մ'է այս : Հասակը կը փոխուի ծանրութեան պէս . եւ մէկ ժամէ միւսը , ո՛չ մի եւ նոյն ծանրութիւնն եւ ո՛չ մի եւ նոյն հասակն ունինք : Անկողնէն ելնելէ անմիջապէս յետոյ եւ պառկելէ՝ առաջ եթէ մարդ ճշդութեամբ չափէ հասակը , շուտով պիտի տեսնէ թէ ընդհանրապէս կը պղծուի իրենց ցորչափ օրը կը յառաջանայ : մարդ աւելի բարձրահասակ է առաւօտեան ժամ ու թիւն քան երեկոյեան ժամ ու թիւն : Եւ շատ մարդոց քով տարբերութիւնն յաճախ մէկ հարիւրող ամեղրը կ'անցնի : Պերիկի 1881 Վիրաբու ժաղան համաժողովին մէջ , Բրոֆ. Մաուզէլ հաղորդեց արդիւնքն շատ մը չափերու օրոնցով կը հետեւեցունէր թէ հասակն զգալապէս կը փոխուի օրուան ժամերուն համեմատ : Ես անձամբ ցերեկին 5-4 հազարող ամեղր կը կորսնցնեմ , եւ կը ծանշեմ մարդիկ որք ամէն օր 5-6 հազարող ամեղր կը կարծնան . եւ ամեն առտու նոյնչափ կը բարձրանան : Կը ծանշեմ մէկն , հեծելանիւ (velocipede) տեսակով որ առտուն 1-72 մեղր բարձրութիւնն ունի , եւ երեկոյն , պղծապետայ անուրջ վրայ քառսուն հազար ամեղր պտըտելէ յետոյ , 1-70 մեղր բարձրութիւն : Մարդ իւր հասակը կը փոխէ քրտն մարդանքին կամ ոտքի կենալու եղանակին համեմատ : Երեկոյն մը որ այս պահուս ամեն առտու Նկարահանեցը կը գտնուի , ժամ լինէն միջեւ կէս օր կանոնաւորապէս 4 հազարող ամեղր կը կորսնցնէ իւր հասակէն :

Հասակին այս փոփոխականութիւնը շատ քիչ գիտեն «գիւղի կախարհներն» որք դրամական փոխարեւութեամբ կը փոխեն երիտասարդաց հասակն : Երբ նոր գրուելիք զինուոր մը պատերազմական նախարարութեան կանոնադրին պահանջած հասակն երկու երեք հարիւրող ամեղր բարձր է , «կախարդը» կը խոտանայ նորա օձիքն աւագտել զինուորապետութենէ : Քննիչ խորհրդէն քանի մը օր առաջ , չափազանց կը յոգնեցնէ զայն եւ երկար ժամեր քաշելու տայ՝ գլխին եւ ուսերուն վրայ ծանր պարկեր բարձած . քունէ կը զրկէ զայն եւ առատ օդի կը լսնցնէ : Երբ , այդ օրինակ տանջանքներէ յետոյ , երիտասարդը շափուի խորհրդին մէջ , հասակը նուազած է 2 , 3 եւ մինչեւ իսկ 4 հարիւրող ամեղր : Յոգնութեան ազդեցութիւնն ի յայտ կու գայ հասակին նուազումով :

Այն ամեն անձինք որ քիչ մարդանք կ'ընեն , որք օրուան մեծ մասը նստուկ կ'անցունեն , անոնց հասակը շատ քիչ կը նուազի : Ընդհակառակն , այն անձինք , որ շատ կը քաշեն , երկար ատեն ոտքի վրայ կը մնան , կրնան կորսնցնել օրը մինչեւ 5 հարիւրող ամեղր : Տաճանելի յառաջնապաշտութեան յետոյ , բոլոր զինուորաց հասակը կը նուազի : Պատճառն այն է որ երբ մարմինն

1) « Քէշա » , քուրդերէն է եւ կը նշանակէ երէց , « Պօլ » , կը նշանակէ պղինձ :

2) Գարնան շրջանին միջեւ աղուն ոչխարները բացթողնուած տեղեր կը մտկաղեն կիկլու համար . այս մուկաղատելոյ « բեր » կ'ըսեն գիւղացիք :

ԱՐԱՐԱՏԵԱՆ ՍՈՒՐՋԱՆԴԱԿ

յոգնի, կը կըրն. նախ աստուած է հիւթ եւ ճարպ, եւ ասպա ածառները նուազ առաձգական եւ նուազ թանձր կը լինին. ճարպային եւ նեարդային բարձրիկներն որք տեղափոխութեան դժուարանաց նեցուկն են՝ նմանապէս կը կորսնցունեն իրենց թանձրութենէն. գործարանական վերանորոգումն յոռի կը լինի եթէ մարդ բռնէ զուրկ մնայ, այնպէս որ այս փոքր պատճառները միանալով յառաջ կը բերեն հասակի զգալի նուազում մը: Ուստի, իրօք, երբէք մի եւ նոյն կազմը չունինք, եւ երբ մարդ կ'ուզէ ճիշդ ու ճիշդ հասակը չափել, պէտք է կանգունը ձեռք առնու անկողնէն ելնելէ յետոյ:

Ինչպէս յայտնի է, գրեթէ մինչեւ քսան եւ հինգ տարեկան կը մեծնանք: Ընդունուած է թէ մանուկն երեք տարեկան եղած ատեն կը հասնի իւր զարգացման կիսուն, եւ թէ վերջնական հասակին կը հասնի քսան երեքէն մինչեւ երեսուն: Այն ատեն, մարդուս ծանրութիւնն սկզբնական ծանրութեան քսանպատիկն է, եւ հասակն՝ ծննդեան հասակին երեք քառորդ անգամը: Մահուկը ծնած ատեն միջին հաշուով 490 հազարորդամեդր է. առաջին տարին, ածումը 20 հարիւրորդամեդր է, այսինքն ընդհանուր աճման 1/16: Երկրորդ տարին, ածումը 10 հարիւրորդամեդր է միայն. չորսէն հինգ տարեկան եւ մինչեւ տարունքն, աճ ընդհանուր աճման 1/24 է միայն: Ասանք միջին հաշիւներ են, որովհետեւ կանխահաս կամ յապտեալ աճումներ կան. մարդիկ կան որք կ'աճին մինչեւ քսան հինգ, երեսուն եւ նոյն իսկ երեսուն երկու տարեկան: Դատ մարդոց աճումը քսան եւ մէկին չաւարտիր: Քննիչ խորհրդոց տեղեկագիրք ցոյց կուտան թէ մէկ երկու տարիէ ի վեր զննուող գրուած եւ յետաձգուած զօրականաց հասակն մէկ քանի հարիւրորդամեդր բարձրացած է: 1868ին, երբ շարժուն պահակներն հաստատուեցան, սեւեռուեցաւ թէ 1864ին ի զէն կոչուած զօրականաց 71% զգալապէս բարձրացած էին:

Մնաց որ ածումը նոյն չէ երկու սեռերուն համար: Ընդհանրապէս, մինչեւ տասն եւ մէկ եւ տասն երկու տարեկան, մանչերն աւելի մեծ եւ ծանր են քան տղայիկները. սակայն այդ տարիքէն սկսեալ բարեւրջումն աւելի արագ է իգական սեռին ըով. յետոյ, տասն եւ հինգէն սկսեալ, մանչերը նորէն աւելի բարձր եւ ծանր կը լինին տղայիկներէն որք նոյն կը մնան:

Ինչ որ ալ լինի, հասակն զգալապէս նոյն կը մնայ քսան եւ հինգէն մինչեւ յիսուն եւ հինգ: Վաթսուներին, կ'սկսի կարճնալ. Այս նուազում անկախ է ողնայարին ծնէլէն. նոյն իսկ կը տեսնուի այն հուժկու ծերունեաց վրայ որք տակաւին շիտակ կը կանգնին. հասակն այսպէս կընայ կորսնցնել 4, 5 եւ նոյն իսկ 7 հարիւրորդամեդր: 1.70 մեդր հասակ ունեցող մարդ մը ութսունին ալ 1.63 մեդր բարձրութիւն ունի:

Այսպէս, իրաւունք ունէինք ի սկզբան ըսելու թէ, ոչ թէ միայն մեր ամբողջ կենաց մէջ մեր հասակը կը փոխենք, այլ նոյն իսկ մի եւ նոյն հասակը չունինք առաւօտ մինչեւ երեկոյ:

(Տեպա)

Հ. ՏԸ ԲԱՆԱՎՅԱՆ

Հայկական պատմութիւն, հայկական գեղարուեստը, հայկական լեզու, այս ամէնը Ռուսաց գիտական աշխարհին հետաքրքրութեան եւ ուսումնասիրութեան մեծապէս նիւթ կը մատակարարեն: Արդէն մեր ապրիլ 20ի թուով ծանօթացուցինք մեր ընթերցողաց ճանապարհորդ Պ. Ելիսէի վրայ: Բեդերսուրի կայսերական աշխարհագրական ընկերութեան դահլիճին մէջ: Այդ դասախոսութեան ներկայ գտնուած է հոծ եւ յոյժ ընտրեալ բազմութիւն մը, որոյ մէջ գտնուած են կայսերացու իշխաններ, նախարարներ, բարձրաստիճան պաշտօնեայնէր. այժմ ալ Բեդերսուրի կ'ընդունան ընկերութիւնն է որ կ'ուզէ ուսումնասիրել հայկական հին գեղարուեստներն եւ ճարտարապետութիւնն: Այդ Հնագիտական ընկերութիւնն որոշեր է զրկել ի Մինիսկիա եւ ի ռուսական Հայաստան երիտասարդ գեղարուեստագէտ Պ. Բերնշտամ նկարելու համար այդ երկիրներու հին արձանագրութիւններն եւ ճարտարապետական զարդարանքներն: Երիտասարդ արուեստագէտն անցեալ տարի ճանապարհորդելով ի ռուսական Հայաստան, կազմեր է մատիտանկար մի գեղեցիկ ալպոմ հայկական հնութեանց: Այս տարի Պ. Բերնշտամ դիտատեսութիւն ունի յատկապէս զբաղել Հայոց հին ճարտարապետութեամբ: Երիտասարդ արուեստագէտը Թիֆլիսի է եւ գիտէ Հայոց եւ վրաց լեզուները:

Ապրիլ 19ին տեղի ունեցեր է Բեդերսուրի կ'ընդունան համալսարանին մէջ Պ. Տոմսոնի «Թէզի» մը ընթերցումը: Պ. Տոմսոն ուզելով ստանալ համեմատական լեզուագիտութեան մագիստրոսի աստիճան, պատրաստած էր թէզ մը «Լեզուաբանական հետազոտութիւններ» վերնագրով, եւ քննած է Հայոց լեզուն ընդհանրապէս եւ Ախլցխայի բարբառը մասնաւորապէս: Հեղինակն այն միտքն է յայտնած որ երբ հայերէնն սկսած է համարուիլ հնդ-եւրոպական լեզուներու մի ճիւղը, լեզուագէտներու համար նորա ուսումնասիրութիւնը նոյնքան անհրաժեշտ եղած է որքան լատիներէնի ուսումնասիրութիւնն. հնդ-եւրոպական լեզուներու մի ճիւղին պատկանող մի լեզուի պատմական զարգացման ուսումնասիրութիւնն անկարելի է, առանց իմանալու հնդ-եւրոպական մնայած բոլոր լեզուներու պատմութիւնն:

Այս «Թէզի» դէմ ըստ օրինի պէտք է լինէին պաշտօնական ընդգիմախօսութիւններ. ընդգիմախօսներու մէջ գտնուած են բրոֆէսէսոր Պ. Կատկանեան եւ Պ. Յագարելի, Լազարեան ճեմարանի վրացերէն լեզուի ուսուցիչը: Պ. Պատկանեան մի քանի նկատողութիւններ ընելէ վերջ յայտնեց է որ Տոմսոնի աշխատութիւնը գոհացուցիչ է: Հեղինակն արժանի համարուած է Մագիստրոսի աստիճանն ընդունելու:

Ռուսիոյ սկստական կաղնածոց նախարարն իւր մասնաւոր հոգածութեամբ առարկայ ըրած է Անդրկովկասու գիւղատնտեսական մի քանի ճիւղերու բարգաւաճումն, օրինակի համար կաթնագործութիւն, ծրարախօսի մշակութիւն եւ նախարարն այս նպատակաւ պատրաստած է ծրագրեր զորք գործադրելու համար յատկացուցած է հարիւր հազար ռուպլիի գումար մը, հաւանութեամբ Բեդերսուրի խորհրդոյ:

Այս լուրն ի հարկէ մեզ ուրախութիւն պիտի պատճառէ եթէ Անդրկովկասեան գիւղացի հայք կարենան, ինչպէս որ շատ հաւանական է, օգտուիլ ռուս նախարարի այս խնամուած ձեռնարկէն:

Միւս կողմէն Ռուսիոյ Երմոսկան նախարարն ուզելով գիւղացիներ Կովկասի գիւղերու վաճառումն եւ այսպէս բաժանել գիւղացի արդիւնաբերութիւնն, որոշեր է որ Կովկասեան գիւղերը իրաւունք ունենան տարուան մէջ երկու շաբաթ առանց քաղաքայի վաճառել իրենց գինին:

Բայց ընդհանրապէս խորին ցուօք կը տեղեկանանք ռուս լրագրերէն որ ներքին գործոց նախարարութիւնը կը շարունակէ Ռուսաստանի ներքին գաւառներէն դէպ ի կարս գաղթեցնել ռուսներ: Մի քանի հարիւր ռուս ընտանիքներ ամուսն մէջ պիտի բերուին ի կարս, մինչ անդին ռուսական Հայաստանի գիւղացիք սարսափելի կերպով կը նեղուին տեղւոյ անձկութեան պատճառաւ:

Ապրիլ 30ին Թիֆլիսի թատրոնին մէջ փառաւորապէս տօներ են Պ. Գ. Չիլիեան համալսար դերասանի 25 տարուան դերասանութեան յոբելեանը:

ՂԱՐԱԲԱՂԻ (10)

ԱՍՏՂԱԳԷՏԸ

ԺԶ.

ՇՈՒՇԻ ԲԵՐԴԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ — ՍԱԼԻԶԱՅԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԵՐ

Արեգակը կը փայլէր. Բնութիւնը գիւղերային փոթորիկէն յետոյ կարծես կրկին կը զարթնուր նոր պայծառութեամբ: Փանակ խանը, Վարանդայի մելիքն եւ Զումալու գուրս ելան Զանաշի տիրոջն եւ գնացին դէպ ի հիւսիսային կողմ: Զինուած մի ահազին խումբ կ'առաջնորդէր նոցա: Անցնելով լեռնային շղթայներէ նոքա սկսեցին վեր ելնել աւելի եւ աւելի բարձր. վերջապէս հասան մի ընդարձակ տափարակի որ կը գտնուէր սարի բարձրաւանդակի վրայ: Այդ տափարակէն կարելի էր նշմարել ամենահեռուստ տեսարանները: Տափարակն երեք կողմէն բլրորդին անմատչելի էր, որովհետեւ չընդապառուած էր պարսպի նման սեղանաձ ժայռերով: Միայն հիսիսային կողմէն կարելի էր բարձրանալ դէպ ի յիշեալ տափարակն:

Ահա, ըսաւ Փանակ խան, ամենաշարմար տեղը բերդ շինելու համար. համաձայն էք, մելիք, տալ ինձ այդ տեղը:

Բայց, ըսաւ մելիքն, ո՞րքան ընդարձակ է:

Երեք կողմերն ամրացնելու պէտք չունինք, իսկ չորրորդ կողմը կը կառուցանենք պարիսպներ եւ աշտարակներ, որոց բարձրութենէն կարելի կը լինի սարսափեցնել բոլոր ստահակներն ոյք կը յանդգնին մօտենալ մեզ:

Լաւ, համաձայն եմ. վաղ կ'սկսինք բերդի հիմնարկութեան:

Ի հարկէ, եւ մինչեւ աշնան վերջը կարելի կը լինի տեղափոխուիլ այդ նոր քաղաքն: Այս տեղ տեսարաններն այնքան գեղեցիկ են եւ բոլոր շրջակայքն այնքան սուրբ կը տեսնուին որ կարծես թէ թափանցիկ ապակիի միջէն կ'երեւին ռուսի յարմար կը

իմի կոչել նոր բերդը ՇՈՒՇՈ(*) :

—Շուշա՛, աստ գեղեցիկ անուն է, կըրկնեց մեկըրը : Կը շնորհաւորեմ զձեզ սրպէս Շուշայի անէրը :

Ամէնքն իջան ձիերէն : Իւրաքանչիւրը վերցնելով մի մի բար կիտեցին միմեանց վրայ եւ կազմեցին փոքրիկ բլրակ : Փանակ խան կանգնելով անոր վրայ, հանդիսաւոր կերպով արտասանեց .

«Եւ թող առաքէ Ալլահը իւր օրհնութիւնը նորակառոյց բերդի վրայ, եւ թող ծաղկի նա որպէս Գիւլիստանի շքեղ վարդերն եւ որպէս մարգարէի տան դրախտի ծառն : Եւ թող լինի նա մի ժամանակ ամբողջ Ղարաբաղի մայրաքաղաքն եւ թող փառաւորուն նա հրաշալի անցքերով : Եւ թող խոնարհին նորակառոյց բերդի զօրութեան առջեւ բոլոր չըջալից իշխանութիւններն, եւ թշնամիները թող չընան որպէս մահիր» :

Այդ խօսքերը վերջացնելէ յետոյ, նա իւր աջը տարաւ նախ դէպ ի ճակատը, յետոյ նոյն ձեռքով շօշալից գետինը, վեր առաւ մի բուռն հող եւ ցրուեց կիտած քարերու վրայ : Նորա օրինակին հետեւեցան բոլորը :

Թէ՛ ճանապարհորդութեան եւ թէ՛ բերդի հիմնարկութեան միջոցին Ջոււղուդ խորին լուսթեան մէջ էր : Երբ որ մեկիքն իւր խումբի հետ սկսան սարէն իջնալ եւ կ'ուղեւորէին դէպ ի Չանախչի, այդ միջոցին Ջոււղուդ իւր ձին կը բռնէր այնքան դանդաղ որ անոնցմէ բաւական ետ մնաց : Բայց ձին յանկարծ խրտչելով նետուեցաւ դէպ ի մի կողմ : Երիտասարդը վեր բարձրացուց աչքերն եւ տեսաւ աստղագէտն որ լը մօտեւար իրեն :

—Ողջոյն, մեկիք Ջոււղուդ, ըսաւ նա, վաղուց է, շատ վաղուց է որ ձեզ հետ չեմ տեսնուած, բայց միշտ ձեր վրայ կը մտածէի :

—Ի՛նչպէս, այդ դու ես : Բոլորովին զքեզ կորած կը համարէի : Ինչո՞ւ համար չեկար ստանալ այն պարգեւը զոր ես խոստացած էի : Բայց, ո՛հ, անօգուտ, բոլորովին անօգուտ ծառայութիւն . . . :

—Մի՛ ուրանաք իմ ծառայութիւնը, մեկիք, ես բոլորը գիտեմ : Ես չեմ կարող երթալ Չանախչի : Բայց գիտեմ թէ ուր տեղ է ձեր ամուսինը . . . :

—Դու գիտե՞ս, ասա՛, ասա՛, ո՞ւր կրնամ գտնել զնա, ի՞նչ պատճառով թողուց զիս :

—Խիտ խորածանկ կերպով խաբեցին զնա զոհեղաւ ձեր թշնամիներու նենգութեան, կարծելով թէ զձեզ պիտի ազատէ զժախտութենէ :

—Արեւմտեան զնա յափշտակեցին : Աստղագէտ, դու վերադարձուցիր իմ կեանքն : Ըսէ՛, այժմ ո՞ւր տեղ է նա :

—Թալիլի մեկիքի իշխանութեան ներքեւ : Նորա ո գին Յուսէինն որ կ'առաջնորդէր Չանախչին պաշարող զինուորաց, քիչ մնաց պիտի զրկուէր իւր կեանքէն ձեր կնոջ ձեռքը : Երգում ըրաւ վրէժ լուծել ձեզմէ : Փանակ խանի գալուստն արդեւ եղաւ նմա վերստին ձեր վրայ դիմել զինու զօրութեամբ : Այն ժամանակ նա դիմեց խորամանկութեանց : Մուրացկանի կերպարանօք մտաւ ձեր ամուսնի խմացաւ ամէն ինչ տե

(*) Շուշա (շնչէ) ազակի : Հեղինակը կը կարծէ թէ Շուշի բերդի անունն այդ բառէն առնուած է, բայց Բաքիի կը հաստատէ թէ՛ այդ անունն առնուած է Շնչի կամ Շոշ գիւղէն որոյ բնակիչք փոխաբերած են այդ բերդը :

ղեկացաւ թէ դուք Սալիհային պատճառաւ չամուսնացաք իւր քրոջ հետ, եւ թէ զինքն հարուածող պատանին Սալիհան էր : Նա վճռեց ինչ որ ալ լինի յափշտակել ձեր ամուսինն իւր վրէժը ձեզմէ լուծելու համար :

Այս տեղ պատմեց աստղագէտը թէ ինչպէս Յուսէին յափշտակեց Ջոււղուդի կինը :

—Ես, չարունակեց աստղագէտը, չէի կարող արգելել զնա կամ խափանել նորա դիտաւորութեան կատարումը : Բայց կը հետեւէի նոցա գործերուն եւ տեղեկացած եմ որ նոքա վճռած են ձեր կինը գերի պահել Ձէյվայի մէջ եւ չազատել զնա մինչեւ որ դուք չամուսնանաք ձեր առջինչաւնածի հետ :

—Հա՛, երբ այդպէս է, գոչեց Ջոււղուդ, ես կ'երթամ կը կորցեմ զնա թշնամւոյն ձեռքէն : Կամ մօխը կը դարձնեմ Ձէյվան, կամ ես կ'ոչնչանամ :

—Մեկիք, չափաւորեցէք ձեր բարկութիւնն : Առ այժմ պէտք է համբերել եւ յետոյ գործել : Թոյլ տուք ինձ աշխատիլ դաղանի կերպով :

—Ո՛չ, ո՛չ, պատասխանեց Ջոււղուդ, չեմ կարող թոյլ տալ չարագործներուն որ անպատուեն Սալիհան : Իմ սուրը մեր մէջ դառաւոր կը լինի : Դու եկ ինձ հետ, քեզ համար ներողութիւն կը խնդրեմ հօրեղորդմէս :

—Ո՛չ, մեկիք, չեմ կրնար :

—Ինչո՞ւ :

—Յետոյ կ'իմանաք : Իսկ դուք պէտք է անպատճառ դնա՞ք Ձէյվա :

—Անպատճառ :

—Ձեզ յաջողութիւն կը ցանկամ : Մնաք բարով մեկիք, ուրիշ տեսն կ'աշխատիմ ձեզ առիթ տալ համոզուելու որ ես ձեր ամենահաւատարիմ ստրուկն եմ :

Բաժնուելով աստղագէտէն, Ջոււղուդ շուտ հասաւ իւր հօրեղորդ քով, ում պատմեց աստղագէտին հանդիպելն եւ ինչ որ լսած էր եւ թէ խորհած էր երթալ պատերազմիլ Ձէյվայի բերդին դէմ :

—Գրկէ՛ զս, սիրելի Ջոււղուդս, ըսաւ մեկիք : Ես կը տեսնեմ որ դիւցազնական յատկութիւններով օժտուած ես, անոր համար կը պարծենամ քեզմով : Ե՞րբ պէտք է երթաս :

—Վաղն առաւօտ, լուսնալուսն պէս :

—Իմ բարեկամ Փանակ խան, կուտա՞ս Ջոււղուդի մի մասն բուք Ջոււղուդիներու :

—Հազար հոգի իմ ամենաընտիր բաջերէն, սիրելի Ջոււղուդ, ըսաւ Փանակ խան :

—Իսկ ես հինգ հարիւր հոգի իմ վարանդացիներէն, պատասխանեց մեկիքն : Եւ թող օրհնէ Աստուած Ջոււղուդի ձեռնարկութիւնն, որովհետեւ արդարութիւնը բոլորովին նորա կողմն է :

ԺԵ.

ՋՈՒՄՇՊԻԴ ԿԵՐԹՈՅԹԱԼԻՇԻ ՄԵԼԻՔԻ ԴԵՄ

Նոր ծագող արեգակն արդէն ճանապարհի վրայ ողջունեց քաջ Ջոււղուդն իւր զօրախմբին հետ : Ղարաբաղի ամենալաւ ցեղին պատկանող նժուգներն ոյք հոչակուած են իրենց գեղեցկութեամբ եւ թեթեւաշարժութեամբ, կը թռչէին նոցա ներքեւ : Աւրախ զուարթ կը սլանար այդ աներկիւղ խումբը մի յանդուգն ասպատակութեան համար : Ջոււղուդ վառուած անհամբերութեամբ, հանգստութիւն չէր տար իւր զօրախմբին : Որպէս զի կարճեցնեն ու-

ղին, կ'երթային վերին Ղարաբաղի ճանապարհով եւ կը դիմէին դէպ ի հին կամուրջն որ շինուած էր միկածուի Թարթարի վրայ : Օրն հասած էր իւր վաճառին երբ նոքա կը ջրէին իրենց ձիանն այդ աղմկալի գետի ալիքներով որ կը վազէր նեղ փապարներու մէջէն : Ջոււղուդ բորբոքուած էր այն ցանկութեամբ որ ինչքան կարելի է շուտ հասնի իւր նպատակին : Այդ պատճառաւ դժկամակութեամբ համաձայնեցաւ անցնել գիշերը Թարթարի մերձակայքը : Բայց անհրաժեշտ էր մի այսպիսի տեղ հանգստացնել հոգնած ձիերն : Որպէս զի կարելի լիի յաջորդ գիշերը Ձէյվայի վրայ յանկարծակի յարձակում ընել :

Բարձի տեղ իւր փափախը գնելով քարի վրայ, գլուխը խոնարհեցուց նորա վրայ : Մածկուած թանձր ետինչիով պոսկած էր Ջոււղուդ Թարթարի ափի մօտ : Խորին լըռութիւնը կը խանդադէր միայն այն աղմուկն որ առաջ կուգար լեռնային գետի հոսանքներէն : Պարզ էր երկինքը, միլիոնաւոր աստղեր կը փայլէին : Այլ եւ ձախ կողմերէն կը ձգուէին լեռներու հսկայական դադաթներն ոյք դեռ շատ տեղեր ծածկուած էին մշտական ձիւնով : Գիշերը ցուրտ էր եւ խոնաւ : Քուռը կարծ ժամանակի համար փակեց նորա աչքերը, բայց այդ կարճատեւ հանգստութեան միջոցին օտակալի երազներ կը հալածէին զնա : Արշալոյսի նըշոյլը սաստիկ ուրախացուց Ջոււղուդն : Արագ թռաւ իւր բացօթեայ անկողնէն, սկըսաւ զարթուցանել իւր զինուորներն որք աստիկ յոգնած կը գտնուէին խոր քունի մէջ : Քաջասիրտ Ղարաբաղցիները շուտ պատրաստուելով ճանապարհ ինկան : Նոր ծագող արեգակն իւր ճառագայթները տարածեց անոնց վրայ այն ժամանակ երբ որ քա արդէն կը գտնուէին հովտի մէջ, լեռներու միւս կողմը : Մինչեւ կէս օր կրնային հասնիլ Ձէյվայի մօտ, բայց որովհետեւ վրձնուած էր գիշերային յարձակում գործել, այդ պատճառաւ կը զնային աւելի հանդարտ քայլերով : Երբ արեւը մօտեցաւ իւր մուտքին, արեւմտեան կողմը վերջապէս ստացաւ արիւնի գոյն : Արձեւս թէ կը նախազգուշակէր այն արիւնտ տեսարանն որ ընդհուպ պիտի հանդիսանար :

Վերջապէս երեկոյեան վերջալոյսը բոլորովին չիջաւ : Լուսինն առ ժամանակ իւր թոյլ լոյսով դեռ կը լուսաւորէր արեւմուտքը : Յետոյ նա եւս մայրը մտաւ : Ու պերն սկսան ծածկել երկինքն : աստղերը ծածկուեցան : Հասաւ այն րոպէն ում վաղուց կ'պատէր Ջոււղուդ :

ԺԸ.

ԳԻՇԵՐՈՅԻՆ ՅԱՐԱՊԵՏԻ ՁԵՅՎԱՅԻ ՎՐՈՅ. — ՋՐԻՄՇՈՒԴԻ ԳԵՐՈՒԻԼԸ

Օգուտ քաղելով գիշերային խաւարէն, Ջոււղուդի զինուորներն, առանց չլուր բարձրացնելու կը մօտենային Ձէյվայի : Երբ զի մէջ ոչ ոք յարձակման կ'պատէր : Բոլոր բնակիչք հանգիստ էին : անհոգութիւնն հասած էր այն աստիճանի որ ոչ մի նախազգուշութիւն ի դարձ գրուած էր : Երբ բոլորովին մօտեցան բերդին, Ջոււղուդ հրամայեց զինուորներուն շտապել : Թողլով հինգ հարիւր հոգի ձիերու քով, մնացածներու հետ յարձակեցաւ նա Ձէյվայի վրայ : Որ էր Թալիլի մեկիքի ամբողջաւոր բերդը : Ջոււղուդ իւր զինուորները բաժնած էր չորս մասի, իւրաքանչիւրն 250 հոգիէ : Յան-

կարծ բերդի չորս կողմէն լսելի եղան սոս-
կալի աղաղակները Զուժուգի զինուորնե-
րու՝ որոնք բռնութեամբ ներս մղուեցան
ամրոցի մէջ։ Շատ տեղեր հրդեհի լայն ըս-
կսեց առաջ ընթանալ հրեղէն գետի նման։
Սարսափած բնակիչները կը վազվզէին յետ
ու առաջ, առանց հասկնալու թէ ինչ կը
լինէր։ Թէ՛ Վարանդացիք եւ թէ՛ Զուժու-
գիքիք ո՛չ հասակի եւ ո՛չ սեռի գանազա-
նութիւն կ'ընէին։ Ամէն հանդիպողը կը
ջարդուէին անոնց սրերու հարուածներէն։
Թալիշի մեղքն եւ նորա որդին, երբ իմա-
ցան յարձակման առաջին նշանները, շտա-
պեցին հաւաքել իրենց զօրքերը թշնամույն
ընդդիմադրելու համար, բայց այն աստի-
ճան շիրտած էին որ չգիտէին ո՞ւր դիմել։
Մի տեղ հանդիպեցան Վարանդացիներու,
կախն սկսաւ ամենայն կատաղութեամբ եւ
կը կատարուէր զիականերու կոյտերու եւ
կիսախառ խրճիթներու աւերակաց վրայ-
իսկ անոնց ետեւէն կը լսուէին խեղճ թա-
լիշեցիներու յուսահատ աղաղակները։ Վա-
ղեցին զէպ ի այն կողմ։ յանկարծ ուրիշ
կողմէն կը լսուէին Զուժուգիներու յաղ-
թական աղաղակներն եւ կրակը կը տա-
րածուէր Զէյվայի մէջ։ Այստեղ կրկին նո-
րոգեցաւ կռիւն աւելի սաստկութեամբ։
Թուի մէջ գերադասեցութիւնը Զուժուգի
կողմն էր եւ նա յոյս ունէր կատարեալ
յաղթանակ տանելու։ Յանկարծ Զէյվայի
հիւսիսային կողմէն լսուեցան աղաղակներ
եւ մի քանի րոպէի մէջ Զուժուգի զօրա-
խումբը պաշարուեցաւ ամէն կողմէ։ Սա-
չէնի մեղքն էր որ կը հասնէր իւր զօրքե-
րով։ Այդ զօրքերն եկած էին մի քանի օր
առաջ եւ զետեղուած էին Զէյվա գետի
միւս ափի վրայ, որպէս զի միանալով Թա-
լիշեցիներու հետ միահամուռ կերպով գոր-
ծէին ընդդէմ Վարանդայի մեղքին։ Զուժ-
ուգի նկատելով սպառնացող վտանգը, մը-
տածեց պատուել եւ անցնել թշնամիներու
մէջէն, բայց ի վեր։ Երկու կողմէն կռիւն
ամենայն յամառութեամբ շարունակեցաւ
մինչեւ առաւօտ։ Այդ միջոցին Զուժուգի
հինգ հարիւր զինուորներն որ թողուած էին
ձիերու ըով, տեսնելով կռուոյն այնքան եր-
կարին եւ տեղեկանալով թէ որպիսի վը-
տանգ կ'սպառնայ Զուժուգին, թողուցին
հարիւր հոգի միայն ձիերու մօտ եւ մնա-
ցածները նետուեցան օգնելու իրենց զօրա-
պետին։
Նոքա գնելով Սաչէնցիներն եւ թալի-
շեցիներն երկու կրակի մէջ, բաւական փո-
խեցին պատերազմի կերպարանքը, բայց
երկար չտեսեց այս, որովհետեւ այդ միջոցին
Զէյվայի սարսափած եւ փախստական բը-
նակիչները ժամանակ գտնելով խելքի գա-
լու, նոյնպէս զինուեցան եւ եւ շտապեցին
օգնելու իրենց մեղքին որ միայն Սաչէնցի
ներու օգնութեամբ կը պաշտպանուէր։ Ի
գուր Զուժուգի ի գործ կը գնէր ինչ որ յու-
սահատ քաջութիւնը կարող էր կատարել։
Հայերն անխնայ զիրար կը ջարդէին, Զուժ-
ուգի զինուորներն հայ թէ Զուժուգիքի
ջարդուեցան, եւ երբ արեգական տաջին
ճառագայթները ծագեցան, Զուժուգի ար-
դէն գերի էր։
—Բարեւ, իմ փեսացու, ըսաւ թալիշի
մեղքը գաղտնային փախտով, երբ շղթանե-
րով կապուած Զուժուգի բերին անոր մօտ։
Դու բա՛լ պատերազմող ես, բայց ոչ բոլո-
րովին յաջողակ։ Ինչո՞ւ համար չնորհ ըրիր
ինձ եւ հիւր եկար մօտս։ Անշուշտ կ'ընդ
տանելու համար, այնպէս չէ՞. դու զայն
կը տեսնես, բոլորովին ողջ առողջ է։
Մեղքը կը ծաղրէր Զուժուգին եւ սա
սէգ կերպով պատասխանեց։

—Չարագործին միայն վայելուչ է հայ-
հայանքներ կարգաւ անդէն գերիի վրայ։
—Ինչ հարկ կայ այդքան խօսքերու,
միջամտեց յանդուգն Յուսէին, վաղուց
պէտք էր զնա բարձրացնել կախաղան։ Շը-
նորհեցէք այդ զուարճութիւնն մեր թալի-
շեցիներուն։
—Պէտք չէ տաքնալ, որդի, շարունա-
կեց թալիշի մեղքը։ Դեռ կանուխ է մի
այդպիսի մահ, նախ պէտք է ծանօթացը-
նել մեր հիւրերն երկարատեւ զուարճու-
թեանց։ Բերէ՛ք զայդ իմ ետեւէն, ըսաւ
նա, դառնալով զէպ ի պահապաններն որ
չըջապատած էին Զուժուգի։
Նոքա մօտեցան մի աշտարակի դռանց
կը լսուէին ծանր հառաչանքներ։ Զուժու-
գի սիրտը կը կտրտուէր, իրեն կը թուէր
որ կը լսէր իւր նազելի Սալիհայի ձայնը։
Դուռը բացուեցաւ եւ ինչ սարսափելի տե-
սարան հանդիսացաւ նորա առաջ։ Սալի-
հան կաշկանդուած երկաթէ կապանքներով
կապուած էր սպառն, պատուաւ հագուստ
ներով նստած էր քարի վրայ։ Լուսոյ տկար
շառաւիղներն որ հաղիւ կը թափանցէին
այդ միջին բանտի մէջ, թոյլ կուտային ո-
րոշել նորա դէմքի գծերն որք աւրուած
էին սրտի գառնութենէն։ Զուժուգի տես-
նելով այդ սոսկալի տեսարանը, քարացածի
նման մնաց անշարժ։ Սրտաշարժ ձայնով
Սալիհայի անունը տուաւ։
—Այդ իմ Զուժուգիս է, աղաղակեց Սա-
լիհա, Աստուած իմ, ուրեմն ես ազատ-
ուած եմ։
—Անշուշտ, ի հարկէ, վրայ բերաւ թա-
լիշի մեղքը, այսուհետեւ դու ամէն րոպէ
զնա կը տեսնես։ Կը մնայ այս տեղ ըու-
քով, չեմ ուզեր զձեզ իրարմէ բաժնել։ Ի-
րարու արժանի էք։
Հրամայեց Զուժուգին եւս շղթայներով
ամրացնել բանտի հանդիպահայեաց պատի
վրայ, իսկ ինքն հեռացաւ մաղթելով նոցա
ամէն տեսակ յաջողութիւններ։
Երկար, շատ երկար առէն դժբաղդնե-
րը կը նայէին իրարու վրայ եւ չէին կարող
խօսիլ։ Արտասուքը կը խեղդէր գրեհը։
Վերջապէս Սալիհան ըսաւ։
—Մի՛ լար, սիրելի Զուժուգի, մենք
թէ եւ անբախտ ենք, բայց միասին ենք,
այդ ալ կը բաւէ։ Որքան ես տանջուեցայ
առանց ընդի։
—Տէր Աստուած, գոհութիւն կը մա-
տուցանեմ, բացառանչեց Զուժուգի, որ
դառնութեանցս հետ ինձ միխթարանը կը
զրկես։
Իրարու հետ խօսելով այդ անբախտնե-
րը զիրար կը մխթարէին։
Այդ միջոցին թալիշի մեղքը ցանկանա-
լով որ Զուժուգի վիճակը բոլորովին գաղտ-
նի պահուի, կանչել տուաւ Վարանդայի
գերիներէն մին եւ յանձնելով նմա մի գը-
լուխ, որ բոլորովին այլանդակուած էր թը-
րերու հարուածներէն, ըսաւ։
—Դա ձեր հրամանատար Զուժուգի
գլուխն է։ Գնա՛ Վարանդայի մեղքի մօտ,
յանձնէ նմա այդ գլուխն եւ ըսէ՛ թէ,
ահա՛ այսպէս կ'ոչնչանան ամէն անոնք ոյք
կը համարձակին յարձակիլ ինձ դէմ։
Այդ խօսքերով նա ճանապարհ դրաւ
գերեզման դէպ ի Զանախի։
(Մնացեալ յաջորդ Լուսն)

Օ Ր Ա Գ Ի Ր

Խառն ժողովն ի նիստ գումարելով մայիս
8 ուրբաթ օր ընդ նախագահութեամբ Ս.
Պատրիարք Հօր եւ ի ներկայութեան երկու

ժողովոց ատենապետներու, հետեւեալ տը-
նօրինութիւններն ըրաւ որք պաշտօնապէս
հաղորդուած են ի հրատարակութիւն։
1.—Ուսումնական Խորհուրդն ազգային
վարժարանաց մէջ ընդունուելու համար
ընտրուած դասագրեանց ցանկը ներկայած
էր։ Ժողովը Դիմաքսեան Գեր. Հմայեակ
եպիսկոպոսի եւ Վսեմ. Նուրեան Էֆէնտի
յանձնեց կատարել հարկ եղած քննութիւնն
եւ արդիւնքն հաղորդել։
2.—Ուսումնական Խորհուրդոյ առաջար-
կութեան վրայ, որոշեց յանձնարարել մայ-
րաքաղաքի թաղ. Խորհրդոց որպէս զի ազ-
գային վարժարանաց մէջ պաշտօն չտան այն
ուսուցչաց որք Ազգային Վարչութեան Ու-
սումն. Խորհրդոյ կողմէ վկայագիր չունին
ի ձեռին։
3.—Ընդունեց Դիմաքսեան Գեր. Հմայ-
եակ եպիսկոպոսի հրատարական յառաջ-
նորդութեան Պալլէստինի եւ որոշեց առաջ-
նորդական ընտրութեան հրահանգ ղրկել։
4.—Ընդունեց Շիշմանեան Գեր. Ղե-
ւոնդ եպիսկոպոսի հրատարական յառաջ-
նորդութեան Պիլէճիկի եւ Քարբերդի ա-
ռաջնորդական տեղապահ կարգեց զՆ. Գե-
րապատուութիւն։
5.—Պուլկարիոյ առաջնորդ կարգեց
Ռուսուզլեան Գեր. Գէորգ վարդապետ։
6.—Կրօնական Ժողովն արժան գատած
էր Սղեղի առաջնորդական տեղապահ
կարգել Սրժ. Տ. Սարգսեանց Տ. Արիստա-
կէս վարդապետը։ Ժողովն ընդունելի դա-
տեց սոյն տնօրինութիւնն եւ հաստատեց։
7.—Ժողովն որոշեց Բարերդի տեղապահ
Նէվրուզեան Արժ. Յովնանէս վարդապետ
ուղարկել յերջնակ, որպէս զի առաջնորդա-
կան ընտրութիւն կատարէ եւ ազգային
գործերը վարէ ցընտրութիւն առաջնորդի։
8.—Գարակէօմիլիկի բարոզիչն եւ քա-
հանայից դասը բողոքագիր մը մատուցած
էին Մալա շարաթաթերթի մէջ տեսնուած
յողուածի մը դէմ, յորում Ս. Հաղորդու-
թեան Խորհուրդն նիւթ եղած էր ան-
պատշաճ խօսքերու։
Ժողովը նկատելով որ յիշեալ թերթին
հրատարակած զէպը գոյութիւն չունի եւ
կրօնի դէմ անարգական հանգամանք մը
կը կրէ, նկատելով նոյնպէս որ ժամանակէ
մի վեր Ազգ. Ժողովոյ որոշումներն խեղա-
թիւրեալ կերպիւ կը ներկայացուն սոյն
թերթին մէջ, եւ անպատշաճ լեզու մը կը
գործածուի ընդհանրապէս ժողովոյ գոր-
ծոց եւ անձանց նկատմամբ, պատրիարքա-
կան Գեր. Փոխանորդ Հօր յանձնարարեց
յիշեալ թերթի արտօնատէրն ինչպէս նաեւ
խօսագիրն կոչելով՝ յուղղութիւն հրաւիրել
ազգարարելով միանգամայն յետս կոչել Ս.
Հաղորդութեան Խորհուրդոյ նկատմամբ հը-
րատարակուած անպատշաճ խօսքերն եւ
զգուշանալ յապագային Ազգային գործոց
եւ ժողովոյ մասին այսպիսի անհիմն եւ
անպատշաճ հրատարակութիւններ ընելէ։
Խառն ժողովն որոշեց միանգամայն որ,
եթէ այս ազգարարութիւնն ապարդիւն
մնայ, իւր դիւանն՝ Ամեն. Ս. Պատրիարք
Հօր հետ համախորհուրդ՝ հարկ եղած օ-
րինական միջոցներն ի գործ դնէ վերջ տա-
լու համար սոյն գաղթականութեանց։

ՇԱՐԱԹԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐԻ
Բարիք, 19 մայիս.
Հանրապետութեան նախագահը խնդրեց
Պ. տը Թրէսինէէ կազմել նոր նախարարու-
թիւնը։ Պ. տը Թրէսինէէ վաղը կամ շաբաթ
պիտի պատասխանէ թէ կ'ընդունի՞ այդ
պաշտօնը։

Բարիկ, 20 մայիս .

Հաւանական է որ Պ. Ռուվիէ, նախկին անդամ Կամպեդիայի նախարարութեան և այժմ ելմտացոյցի Բանձնաժողովոյ նախագահ, և Պ. Բօլ Տըվէ, միւսնոյն կուսակցութենէն, մտնեն նոր նախարարութեան մէջ : Լրագրաց միւս բոլոր տեղեկութիւնք ենթադրութիւն են միայն : Լրագիրք շատ տարակարծիք են ի մասին Զօր. Պուլանժէի պահպանման նոր նախարարութեան մէջ :

Նովոշէրքաք, 19 մայիս .

Գահաժառանգ Նիգոլա-Ալեքսանտրովիչ մեծ-դուքսն այսօր մեծ հանդիսիւ Տոնի խաղախոյ աթաման (սկեա) հռչակուեցաւ :

Բարիկ, 20 մայիս .

Պ. տը Ֆրէսինէ ծանոյց Հանրապետութեան նախագահին թէ կացութիւնը քննելէ յետոյ, համոզուած է թէ չկրնար կազմել նախարարութիւն մը որ տեւականութեան բաւական յոյս տայ, և հետեւաբար կը մերժէ պաշտօնն զոր նախագահը բարեհաճած է յանձնել իրեն :

Բարիկ, 21 մայիս .

Հաւանական է որ Հանրապետութեան նախագահը բանակցի քաղաքական գլխաւոր անձանց հետ, անոնցմէ միոյն յանձնելու համար նոր նախարարութիւնը կազմելու պաշտօնը : Ռէքէ-պէ՛ Թանաշ կը յուսայ թէ Պ. տը Ֆրէսինէ ետ առնու զիր որոշում :

Բեդերսպուրի, 21 մայիս .

Կայսրն և կայսերական ընտանիքը Նովոշէրքաքէ մեկնեցան հինգշաբթի իրիկուն :

Բեդերսպուրի, 22 մայիս

Կայսրն որ կը կարծուէր թէ Նովոշէրքաքէ Սրիմ գնացած է, երէկ իրիկուն Մոսկուա հասաւ : Բեդերսպուրի վերադառնալու համար :

Լոնտոն, 21 մայիս .

Տէյն Նէ-լ կը հաւատէ թէ Ռուսիա կաւելցնէ իւր զինուորական ոյժեր Արեւմտեան (Գերմանիա և Աւստրիա) սահմանագլխին վրայ :

Բարիկ, 23 մայիս

Հանրապետութեան նախագահն առաւօտուն պիտի կոչէ զՊ. Ֆլոքէ, նախագահ Երեսփոխանաց Ժողովոյ, սակայն հաւանական է որ Պ. Ֆլոքէ մե ժէ : Ապա նոր ձեռնարկներ պիտի լինին Պ. տը Ֆրէսինէի մօտ, որ միայն կարող կը թուի լուծել տագնապը :

Արմատական ընտրելի Պ. Մըզիւռէօն 220,000 ձայնիւ Սէնի (Բարիկ) երեսփոխան ընտրուեցաւ փոխանակ վախճանեալ Պ. Գանդալուելի : Զօր. Պուլանժէ, թէն ընտրելի չէր այս ընտրութեան համար, 38,000 քուէ չահեցաւ :

Բարիկ, 24 մայիս .

Նախարարական տագնապը փոփոխութիւն չկրնէ : Կը կարծուի թէ Պ. տը Ֆրէսինէի նախագահութեամբ նոր նախարարութեան մը կազմութիւնն յետաձգուած է միայն :

Պրուսէլ, 24 մայիս .

Էմիլ փաշան գտնել գնացող Պ. Սըան-լի և հետեւորդք ապրիլ 50) Ին Սըանլիի լճէն մեկնեցան Գոնկոյի գետն ի վեր ելնելու համար :

Աթէնք, 24 մայիս .

Կը հաստատուի թէ կառավարութիւնն 120 միլիոն ֆրանքի փոխառութիւն մ'կնքէր է 4 1/2 տոկոսով Լոնտոնի զանազան սեղանաւորներէն : Փոխառութեան պայմաններն, որք նպաստաւոր են, պիտի քարձրացնեն երկրին վարկն եւ մեծապէս պիտի նուազեցնեն թղթադրամին անկումը :

Փարիզ, 24 մայիս

Հանրապետութեան նախագահը խնդրեց Երեսփոխանական Ժողովոյ նախագահ Պ. Ֆլոքէէ կազմել նոր նախարարութիւնը : Պ. Ֆլոքէ վաղիւ պիտի պատասխանէ :

Արտաքին գործոց նախարար Պ. Ֆլուռէնս այս առաւօտ ընդունեց օսմանեան դեսպան Էսաու փաշան :

Փարիզ, 25 մայիս

Պ. Ֆլոքէ տրամադիր է եղեր պահել նախորդ նախարարութեան անդամներէն զոմանս, գլխաւորապէս զՊ. Ֆլուռէնս եւ Զօր. Պուլանժէ : Ելմտական նախարարութիւնը պիտի առջարկէ եղեր Պ. Ռուվիէի : Սակայն Պ. Ֆլուռէնս տրամադիր չթուի ընդունիլ, ի մի բան, գուշակութիւնք տարածայն են արդի բանակցութեանց վերջնական ելլից վրայ :

Փարիզ, 25 մայիս

Պ. Ֆլոքէ մերժեց նոր նախարարութիւնը կազմելու պաշտօնը :

Փարիզ, 26 մայիս

Հանրապետութեան նախագահին հրաւիրանօք Պ. տը Ֆրէսինէ երեկոյն նախագահական պալատը գնաց խորհրդակցելու համար կացութեան վրայ :

Փարիզ, 26 մայիս

Կը կարծուի թէ Պ. տը Ֆրէսինէ ընդունելու է նոր նախարարութիւնը կազմելու պաշտօնը :

Բեդերսպուրի, 25 մայիս .

Կայսերական հրովարտակ մը կ'արդէրու օտարազգեաց հող գնել կամ ցկեանս ստանալ Ռուսիոյ նաւահանգստաց և քաղաքաց անմիջական չըջակայքը :

Բարիկ, 26 մայիս .

Բարիկի Օրէրա-Գոմիք թատրոնն հոյ ճարակ եղաւ : Զոհերուն ցարդ ծանօթ թիւն է 19 մեռեալ և 60 ի չափ վիրաւոր : Լոնտոն, 25 մայիս .

Տարեկան մեծ ձիարշաւ տեղի ունեցաւ յէրոմ, եւ Տէրպիլի մեծ պարգեւը շահեցաւ Մէրքէ Հէժը՛ն ձին, երկրորդ եղաւ Պէրէ եւ երրորդ եղաւ Մաքսէլ :

Արտօնատէր Կ. Ս. Իիթիիճեմն ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՆԵԼԷ ԻՐԱԳՐՈՒ :

ՄԵՏԵՍ՝ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆ

ՄԵԼԻՐԷՆՈՒՆԵՐԻՆ՝ ՄԵԼՈՒՆՆԵՐԻՆ

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER)



Ճերմակ քնկած մազերուն գոյն, վերնիճ ու գեղ կուտայ : Կը նորոգէ անոր կեանքը, ոյժը և աճումը : Գլխու թեփը շուտ մը անկեւթ կ'ընէ : Իր անուշ հոտը առատ է ու հեշտակ :

“Մէկ շիշը կը բաւէ :” Եւ փորձը ունեցան ամենքը որոնցմիտքառնած մազերը իրենց բնական գոյնին դարձան, և ճաղատ տեղերը մազով ծածկուեցան :

Ներկ չէ, և ամենեւին զեան մը չընէր : Թէ որ կ'ուզես թարմ մազ ունենալ և բոլոր կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շիշ մը ստացիր ԿԵԼԵՆՆԵՆ՝ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆԻ ՀԱՄԱՆԻՆԻ ԽԱՐԿԱՆ ԽՈՒՆՆԵՐԻՆ (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Նոյնպէս Բարիկ ու Նիու Եօրք : Կը վաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղագործներու և անգլիացի դեղագործներու քով :

Կը գտնուի Ն. և Ժ. Գանդիւք եղբայրք բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց : Էտմընտ Քարաուն, Անգլիական միջերանոց, Նիւքօք Գալտըրըմ, և Իգիտօր Լազանտէլլա 455, Բերա Մեծ փողոց :

ՀԵՐՄԵՆԵԿԵՆ ՆՎԵՂԱՔՈՒՆՆԵՐ

ԳԵՂԱՅԿԱՅՈՒՆՈՂ, ՄԵՐՄԱՅՅ ԳՈՅՆԵՐ, ՍԻՇՏ ՆՎԵՂԱՔՈՒՆՆԵՐ, ՄԻՇՏ ԹԵՐՄՈՒՆՆԵՐ :



Ընդամուտն մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիւթներէ և բաղմամբիւ փոշիներէ : Ըսալին անգամ գործածելովն ալ, որ քանի մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի խիղճն որ երեսը, վիզը, թեկը և ձեռքները պիտի առնուն անոյշ փափկութիւն մը և մարմարիտի փայլ, հանդերձ շուշանի և վարդի գունով և բուրմամբ :

Սապոնի գրգռիչ յատկութիւնները արեւայր չեն ունենում : Եւ աս ամեն բանով անկարելի կը հանդարտեցունէ : Ընհետ կ'ընէ մերթի սեւեքը, երեսի և ձեռքի ցանկերը, արեւայր թուրք, և ուրիշ ամեն բրտութիւն և բժաւորութիւն : Եւ աս ամեն բանով գեղեցեցունած է :

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Նոյնպէս Բարիկ ու Նիու Եօրք : Կը վաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղագործներու և անգլիացի դեղագործներու քով :

Կ, գտնուի Ն. և Ժ. Գանդիւք եղբայրք բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց : Էտմընտ Քարաուն, Անգլիական միջերանոց, Նիւքօք Գալտըրըմ, և Իգիտօր Լազանտէլլա 455, Բերա մեծ փողոց :



ԿԵԱՆԲ, ԱՃՈՒՄՆ և ԳԵՂ ՄԱՋՆԵՐՈՒ :

ՄԻՇԼՐՈՒՆ

ՄԵԼՈՒՆՆԵՐ ՄԵՂԱ ՀԵՏԻԿ ՆԱՐՈՒԹԻՆ

Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ճերմակած կամ գունաթափ մազերը : Կը դադրեցունէ անոնց թափելը : Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցեցութիւն կուտայ :

Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շիշերու մէջ : Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Նոյնպէս Բարիկ ու Նիու Եօրք :

Կը գտնուի Ն. և Ժ. Գանդիւք եղբայրք բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց : Էտմընտ Քարաուն, Անգլիական միջերանոց, Նիւքօք Գալտըրըմ, և Իգիտօր Լազանտէլլա 455, Բերա Մեծ փողոց :